

ԾԱՆՐ ՀԻՎԱՆՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՊԱՏԺԻՑ ԱՁԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ

Դիանա Ղազարյան

*ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության
մշակման վարչության պետի տեղակալ*

Ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման վերաբերյալ իրավական դրույթներն ամրագրված են ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածում, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 113-րդ և 117-րդ հոդվածներում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 4-ի «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» թիվ 1636-Ն որոշմամբ (այսուհետ՝ թիվ 1636-Ն որոշում) և ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ (այսուհետ՝ թիվ 825-Ն որոշում):

ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն. *«Եթե անձը հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը խոչընդոտում է պատիժը կրելուն, ապա դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. *«Այն դեպքում, երբ ազատագրված անձը պատիժը կրելու ժամանակ հիվանդացել է խրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն, դատարանը, քրեական պատիժն իրականացնող հիմնարկի վարչակազմի միջնորդագրով, որը պետք է հիմնված լինի բժշկական հանձնաժողովի եզրակացության վրա, իրավունք ունի որոշում կայացնել պատիժը հետազայում կրելուց նրան ազատելու մասին»:*

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն. *«Ծանր հիվանդությամբ հիվանդացած անձանց պատիժը հետազայում կրելուց ազատելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության ծանրությունը, դատապարտյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ»:*

Վերոգրյալ քրեաիրավական դրույթների իրացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությանն ընդունել է թիվ 1636-Ն և թիվ 825-Ն որոշումները: Թիվ 825-Ն որոշման առաջին հավելվածով հաստատված կարգի 13-րդ կետի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվում է բժշկական աշխատանքային հանձնաժողով (այսուհետ՝ ԲԱՀ): Համաձայն նույն որոշման առաջին հավելվածի 17-րդ կետի՝ ԲԱՀ-ը, ի թիվս այլ գործառույթների, իրականացնում է՝ *«դատական որոշման կատարման հետաձգման ներկայացնելու ենթակա հիվանդ դատապարտյալներին Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» N 1636-Ն որոշմամբ հաստատված կարգով ստեղծ-*

ված համապատասխան միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին ներկայացնելու գործընթացը՝ սույն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին համապատասխան»:

Վերոգրյալ հավելվածի 18-րդ կետի համաձայն՝ ԲԱՀ-ի որոշումը ենթակա է պարտադիր կատարման, իսկ 19-րդ կետի համաձայն՝ ԲԱՀ-ի որոշումը կայացվում է հիվանդ կալանավորված անձի կամ դատապարտյալի համակողմանի բժշկական հետազոտությունների արդյունքների ուսումնասիրության և կոլեգիալ քննարկումների հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բուժական ուղղիչ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկում՝ լրացուցիչ հետազոտությունից հետո:

Համաձայն թիվ 1636-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝ ստեղծվել են երեք Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ (այսուհետ՝ ՄԳՀ-ներ)՝ դատաբժշկական, դատահոգեբուժական և բժշկական փորձաքննության: Համաձայն նույն որոշման հավելվածի 3-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ծանր հիվանդության հետևանքով, բացի հոգեկան առողջական վիճակին վերաբերող խնդիրներից, պատժից ազատելու նպատակով բժշկական փորձաքննությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմում, պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից բացի, որպես անդամ ընդգրկվում են նաև մեկական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումից: Հանձնաժողովի կազմում ներկայացուցիչներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ներկայացմամբ»:

825-Ն որոշման դրույթների վերլուծությունը վկայում է, որ սույն որոշմամբ ամրագրված է հիվանդ դատապարտյալին ՄԳՀ ներկայացնելու ԲԱՀ-ի գործառույթը, սակայն ամրագրված չէ այդ գործառույթի իրականացման ընթացակարգը: Այսպես օրինակ, ամրագրված չեն ԲԱՀ-ի կողմից որոշումներ կայացնելու ժամկետները, հարցերի շրջանակը, որոնց պետք է անդրադառնա ԲԱՀ-ը իր որոշումներում, նիստերի հրավիրման կարգը և այլն: Հարցերի շրջանակի վերաբերյալ բացառապես ամրագրված է, որ ԲԱՀ-ը որոշումները կայացնում է իր իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ: 825-Ն որոշման դրույթների վերլուծությունից, թերևս, կարելի է հանգել այն եզրակացության, որ ԲԱՀ-ը կարող է ընդունել երկու տեսակի որոշում՝ դատապարտյալի անտորոշումը համապատասխանում է կառավարության որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկին կամ չի համապատասխանում: Այս համատեքստում խնդրահարույց է ԲԱՀ-ի որոշումների հասցեատերերի հարցը: Միակ իրավական ամրագրումը այն է, որ ԲԱՀ-ի որոշումները ենթակա են պարտադիր կատարման, սակայն հստակ չէ, թե ում համար են պարտադիր այդ որոշումները: Իրավակիրառ պակտիկայի վերլուծությունը վկայում է, որ դրանք պարտադիր չեն ՄԳՀ-ի համար, քանի որ ՄԳՀ-ն գործնականում հաճախ ԲԱՀ-ի որոշումներին հակառակ որոշումներ է ընդունում: Այստեղից կարելի է եզրա-

հանգել, որ ԲԱՀ-ի որոշումները պարտադիր չեն ՄԳՀ-ի համար, հետևաբար նաև չեն կարող պարտադիր լինել դատարանի համար:

ԲԱՀ-ի կողմից որոշումների ընդունման ընթացակարգի հստակ կարգավորումների բացակայությամբ պայմանավորված՝ հաջորդ խնդիրը կապված է ԲԱՀ-ի որոշումները հիմնավորելու իրավական պահանջի հետ, ինչը կարող է հանգեցնել նույնատիպ հանգամանքներում տարաբնույթ որոշումների կայացման: Խնդրահարույց է նաև պատժից ազատման ենթակա հիվանդ դատապարտյալին ՄԳՀ ներկայացնելը որպես ԲԱՀ-ի գործառույթ դիտարկելը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է ծանր հիվանդության հիմքով դատապարտյալի նկատմամբ կայացված որոշման կատարումը հետաձգելու (հոդված 431) և ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու (հոդված 432) հնարավորությունները: 825-Ն որոշման թիվ 1 հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ ԲԱՀ-ը իրականացնում է դատական որոշման կատարման հետաձգման ներկայացնելու ենթակա հիվանդ դատապարտյալներին թիվ 1636-Ն որոշմամբ հաստատված կարգով ստեղծված համապատասխան ՄԳՀ-ին ներկայացնելու գործընթացը: Հետևաբար, որպես ԲԱՀ-ի գործառույթ ամրագրված է բացառապես դատական որոշման կատարման հետաձգման ներկայացնելը: Այդուհանդերձ, գործնականում ԲԱՀ են ներկայացվում նաև այն դատապարտյալների գործերը, ովքեր կարող են պատժից ազատվել ծանր հիվանդության հիմքով, և դրական եզրակացության դեպքում վերջիններս ԲԱՀ-ի կողմից ներկայացվում են ՄԳՀ: Իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ ԲԱՀ-ը հիվանդ դատապարտյալին պատժից ազատելու նպատակով բժշկական եզրակացությամբ ՄԳՀ ներկայացնելու լիազորություն չունի, սակայն գործնականում նման լիազորություն ևս իրականացնում է: Եվ ի հակադրություն սրա՝ 1636-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ ՄԳՀ-ն իրականացնում է «(...) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ծանր հիվանդության հետևանքով, բացի հոգեկան առողջական վիճակին վերաբերող խնդիրներից, պատժից ազատելու նպատակով բժշկական փորձաքննությունը», այլ ոչ թե ծանր հիվանդության հիմքով դատական որոշման հետաձգման ենթակա դատապարտյալների բժշկական փորձաքննության անցկացումը:

Ամփոփելով ԲԱՀ-ի գործունեությանը վերաբերող իրավական կարգավորումները և դրանցով պայմանավորված խնդիրները՝ պետք է փաստել, որ անհրաժեշտ է հստակ ամրագրել ԲԱՀ-ի գործառույթները՝ վերացնելով առկա օրենսդրական հակասությունները, և կանոնակարգել ԲԱՀ-ի գործունեությունը՝ ելնելով ամրագրված գործառույթներից:

Անդրադառնալով ՄԳՀ-ների հետ կապված իրավական խնդիրներին՝ պետք է թերևս շեշտադրել դրանց աշխատանքային կանոնակարգման բացակայությունը: Եթե ԲԱՀ-ի աշխատանքը կարգավորող ընթացակարգը, թեկուզև թերի, այդուհանդերձ ամրագրված է, ապա ՄԳՀ աշխատակարգը առհասարակ որևէ իրավական ակտով սահմանված չէ: Հետևաբար իրավական բացի շտկման և համապատասխան կարգավորման ենթակա է ՄԳՀ-ի կողմից որոշումների կայացման ընթացակարգը, լուծման ենթակա հարցերը, ժամկետները, որոշումների հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջերը և այլն: ՄԳՀ-ի գործունեության վերլուծությունը վկայում է, որ ՄԳՀ-ի հիմնական գործառույթն է դատապարտյալի մոտ առկա հիվանդության վերաբերյալ եզրակացություն տալը, որը, ըստ էության, կարող է տրամադրել համապատասխան ոլորտից նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձը: Ուսումնասիրելով ՄԳՀ անդամների կազմը, որոնց մեջ, համաձայն 1636-Ն որոշման հավելվածով սահմանված 3-րդ կետի, պետական կառավարման

լիազոր մարմնի ներկայացուցիչներից բացի, ընդգրկվում են նաև մեկական ներկայացուցիչ ՀՀ առողջապահության նախարարությունից և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումից, հարց է առաջանում, թե արդյոք հնարավոր է նեղ մասնագիտացում պահանջող հարցերի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՄԳՀ աշխատանքներին ներգրավել համապատասխան մասնագետներ: Այս հարցին ևս որևէ իրավական ակտում անդրադարձ չկա: Այսպիսով՝ ՄԳՀ-ի գործունեության համապարփակ կանոնակարգումը ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման ինստիտուտի բարեփոխման համատեքստում ևս պետք է դիտվի առաջնահերթություն:

Քրեաիրավական տվյալ ինստիտուտի կիրառման նպատակների տեսանկյունից խնդրահարույց է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի երկրորդ մասում կիրառվող *«(...) հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո հիվանդացել է ծանր հիվանդությամբ (...)»* և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի առաջին մասում կիրառվող *«(...) ազատագրվման դատապարտված անձը պատիժը կրելու ժամանակ հիվանդացել է խրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ (...)»* ձևակերպումները, քանի որ որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե արդյոք անձը հիվանդությունը ձեռք է բերել հանցանքը կատարելուց առաջ, թե կատարելուց հետո, նախքան դատավճիռը կայացվելը, թե դատավճիռը կայացվելուց հետո: Կարևորն այն է, որ պատիժը կրելու ընթացքում անձը ունի պատժի կրման հետ անհամատեղելի հիվանդություն: Այն դեպքերը, երբ անձի մոտ հիվանդությունը առաջացել է նախքան հանցանք կատարելը կամ դատավճիռ կայացնելը, սակայն հայտնաբերվել է արդեն պատիժը կրելու ընթացքում, ուղեկցվում են օրենքի մեկնաբանության խնդիրներով: Իրավական դրույթների տարացի մեկնաբանման դեպքում ԲԱՀ-ը կարող է բացասական եզրակացություն տալ այն պատճառաբանությամբ, որ հիվանդությունը ձեռք չի բերվել հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո: Նման մեկնաբանման հետևանքով այս ինստիտուտի նշանակությունը և հիմքում դրված հումանիստական մոտեցումը խոցելի են դառնում: Քրեադատավարական նորմերի որոշակիության սկզբունքի պահպանման տեսանկյունից խնդրահարույց է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի երկրորդ մասի *«(...) ապա դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ»* ձևակերպումը: Մասնավորապես պարզ չէ, թե ինչ տեսանկյունից պետք է հաշվի առնվեն նշված հանգամանքները, ինչպիսի իրավաչափ նպատակ հետապնդելով և համապատասխանաբար ինչպիսի մտահոգություններ փարատելու համար և այլն: Այս առումով «այլ հանգամանքներ» եզրույթը, առանց նշված իրավաչափ նպատակների մատնանշման, առավել թերի է իրավական որոշակիության տեսակետից, քանի որ ըստ էության թույլ է տալիս ցանկացած հանգամանք դիտարկել որպես որոշման հիմքում դրվելուն ենթակա չափանիշ: Տարբեր երկրների (Միացյալ Թագավորություն, Ավստրիա, Ռուսինիա) փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատապարտյալի անձը, հանցանքի ծանրությունը, ինչպես և որևէ այլ հանգամանք հաշվի են առնվում բացառապես նրա կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգի, տուժողի շահերի պաշտպանության անհրաժեշտության և քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ մասնագիտական խնամք ստանալու հնարավորության հետ կապված հանգամանքների համադրության տեսանկյունից:

Պետք է նշել նաև, որ այս խնդրի առումով, խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի ընդհանուր նորմատիվ արգելքից բացի, կան համապատասխան միջազգային կառույցների փաստաթղթեր (օրինակ՝ Դատապարտյալների հետ վարվեցո-

դության ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները՝ հոդված 22¹), որոնք նշում են, որ այն դատապարտյալները, որոնք թևակոխում են իրենց հիվանդության վերջին կամ խրոնիկ փուլը, կարիք ունեն կյանքի վերջին շրջանում պալեատիվ բուժօգնության²: Այս պարագայում խնդրահարույց է քրեակատարողական հիմնարկի պայմաններում այդ բուժօգնությունն ապահովելու հնարավորությունը:

Վերլուծելով ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատման ինստիտուտը և առկա կարգավորումները՝ անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 113-րդ հոդվածի 7-րդ մասին, որով մասնավորապես ասվում է. «*Հոգեկան կամ այլ ծանր հիվանդության կապակցությամբ պատժի հետագա կրումից ազատելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացնում պատիժը կատարող հիմնարկի պետը: Միջնորդության հետ միաժամանակ ներկայացվում են համապատասխան բժշկական հանձնաժողովի եզրակացությունը և դատապարտյալի անձնական գործը*»:

Տվյալ կարգավորմամբ միայն պատիժը կատարող հիմնարկի պետի միջնորդության հիման վրա դատարանը կարող է գործը քննել, իսկ դատապարտյալի, նրա ներկայացուցչի, օրինական ներկայացուցչի դատարան դիմելու իրավունքը փաստորեն սահմանափակվում է: Դատապարտյալի՝ ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման իրավունքի իրացման համար բավարար երաշխիքներ ապահովելու նկատառումից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում դատապարտյալին և վերջինիս օրինական ներկայացուցչին ևս օժտել նման իրավունքով և վերոգրյալ նորմը համապատասխանեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն՝ «*Դատապարտյալն իրավունք ունի դիմել որոշում կայացրած դատարան՝ դատական որոշման կատարումը հետաձգելու, ծանր հիվանդության կամ հետաձգման ժամկետը լրանալու հետևանքով պատիժը կրելուց ազատելու, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ հարցերի մասին հայտարարություններով*»: Այս համատեքստում արտասահմանյան երկրների, մասնավորապես Ֆրանսիայի, Ռումինիայի, Միացյալ Թագավորության³ փորձը ցույց է տալիս, որ պատժի կրումը խոչընդոտող հիվանդություն ունեցող անձի՝ անմիջապես դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է օրենքով: Միաժամանակ, դատապարտյալը ազատվում է այնպիսի փաստաթղթեր (օրինակ՝ բժշկական հետազոտությունների վերաբերյալ) ներկայացնելու պարտականությունից, որոնք վերջինիս համար լրացուցիչ ֆինանսական բեռ կարող են առաջացնել: Նմանատիպ կարգավորումը պայմանավորված է ֆինանսական հնարավորությունների բացակայության դեպքում տվյալ իրավունքի իրացման խոչընդոտները վերացնելու նկատառումով⁴: Ամփոփելով վերոգրյալը և անդրադառնալով ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման ինստիտուտի բարեփոխմանն ուղղված հնարավոր քայլերին՝ պետք է շեշտադրել նաև դատապարտյալի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից անմիջապես դատարան դիմելու իրավունքի ամրագրման անհրաժեշտությունը:

¹ Տե՛ս ՄԱԿ-ի «Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն կանոններ», ժնև, 1955թ: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18499>

² Տե՛ս **Murphy, Nicole M.** "Dying to be Free". *Marquette Law Review.*, May 2014:

³ Տե՛ս **Williams, Brie; et al.** (2011). "Balancing Punishment and Compassion for Seriously Ill Prisoners". *Annals of Internal Medicine* :

⁴ Տե՛ս **Boothby, Jennifer, and Lorraine Overduin.** "Attitudes Regarding the Compassionate Release of Terminally Ill Offenders." *The Prison Journal* (2007):

ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ ДАЛЬНЕЙШЕГО ОТБЫВАНИЯ НАКАЗАНИЯ В СВЯЗИ С ТЯЖЕЛОЙ БОЛЕЗНЬЮ

Диана Казарян

*Заместитель начальника департамента по разработке антикоррупционной
и уголовно-исполнительной политики аппарата Министерства юстиции РА*

Данная научная работа посвящена порядку освобождения от дальнейшего отбывания наказания в связи с тяжелой болезнью. В рамках статьи были проанализированы проблемы, касающиеся порядка освобождения от дальнейшего отбывания наказания в связи тяжелой болезнью, и представлены предложения касательно их решения.

THE PROBLEMS OF THE PROCEDURE OF RELEASE ON THE GROUND OF SEVERE DISEASE

Diana Ghazaryan

*Deputy Head of the Department
For Anti-corruption and Penitentiary Policies
Development of the Ministry of Justice of the RA*

The article is devoted to the procedure of release on the ground of severe disease. Within the framework of the article were analysed the problems of existing procedure and presented relevant solution mechanisms.

Բանալի բառեր – պատժից ազատում, ծանր հիվանդություն, դատապարտյալ, բժշկական հանձնաժողովի եզրակացություն, միջգերատեսչական բժշկական հանձնաժողով

Ключевые слова: освобождения от дальнейшего отбывания наказания, серьезные болезни, заключенные, отчет медицинской комиссии, межведомственная медицинская комиссия

Key words: procedure of release, serious disease, prisoners, medical commission report, interdepartmental medical commission